

Գ. ԴԱՎԹՅԱՆ


ԵԽԱԽՈՏԻ ՄԵԱԿՈՒՅԹԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

633-46

25 JAN 2018
009

Գ. ԴԱՎԹՅԱՆ

ԾԽԱԽՈՏԻ ՄԵՇԿՈՒՅԹԻ
ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ



ԳՅՈՒՂՋՐԱՏ

1934

ՑԵՐԵՎԱՆ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեր յերկրագործության սոցիալիստական վերակառուցման
խոշորագույն լծակներից մեկը նրա քիմիացումն եւ քիմիական պա-
րաբռանյութերի գործածությունը:

Յերկրագործության քիմիացումը մենք առաջին հերթին
սկսում ենք տեխնիկական մշակույթներից:

Ծխախոտն ել տեխնիկական մշակույթների շարքին և պատ-
կանում, ուստի մենք ամեն կերպ պետք եւ ծավալենք ծխախոտի
քիմիացման աշխատանքները՝ շատ և լավ վորակի ծխախոտ ստա-
նալու համար:

Ծխախոտի մշակույթյան ազգութեխնիկական ձեռնարկում-
ների կոմպլեքսի մեջ պարարտանյութերի գերը չափազանց մեծ ե
նախ և առաջ այն տեսակներից, վոր պարարտանյութեր գործա-
դրելով, մենք կարող ենք կանոնավորել ծխախոտի բերքի վորակն
այս կամ այն չափով, մեր ուղածի պես:

Վորակնեղի հասկանալի լինի, թե ինչ ազգեցություն են գոր-
ծում տարբեր պարարտանյութերը ծխախոտի քանակի և վորակի
վրա, պետք եւ իմանալ, թե ինչ նյութեր կան ծխախոտի մեջ և
ինչպես են նրանք փոփոխվում պարարտանյութեր գործածելուց:

Ահա այդ հարցերը և ծխախոտի պարարտացման սկզբունք-
ները կազմում են սույն գրքույկի բովանդակությունը:

ՀԵՂԻՆԱԿ

Պատ. իմբագիր՝ Պ. Քալանքարյան
Տել. իմբագիր՝ Պ. Սարյան

Մբագրիչներ՝ Խ. Այվազյան յեկ Մ. Փանոսյան
Հանձնվել եւ արտադրության 1934 թ. մարտի 6-ին
Սառադրվել եւ առագրելու 1934 թ. մարտի 14-ին
Գլամիս № 192

Տիրաժ 2000

Պատվ. № 204

ԳՅՈՒՂՋԱՑԻ ՏՊԱՐԱՆ, ԵԵՐԵՎԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50, ՀԵՌ. № 94



11 2493/92

Ա. ՇԽԱԼԽՈՏԻ ԲՈՒՅՍԻ ՄՆՆԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ամեն մի բույսի, այնպես ել ծխախոտի նորմալ աշեցողության համար անհրաժեշտ գործոններն են՝ հողը կամ աննդատու նյութերը, ոդը, ջուրը, լույսն ու ջերմությունը։ Հնաբավոր չետեր, թե այս գործոններից վորն ե ամենից կարևորը՝ նրանք բոլորն ել անհրաժեշտ են բույսերի անեցողության համար։

Մեր պայմաններում ողը, լույսն ու ջերմությունն առատ են, ջրի պահանջն ել բավարարվում ե արհեստական կերպով՝ վոռոգմամբ, սակայն հողը բույսին անհրաժեշտ սննդանյութերով մեծ մասամբ աղքատ ե, կամ այդ սննդատու նյութերը հողի մեջ գըտնվում են այնպիսի դրության մեջ, վոր բույսերը չեն կարողանում նրանցով սնվել։

Այդ ե պատճառը, վոր մարդիկ՝ յերկրագործության պատմության ընթացքում, ամենից շատ աշխատել են հողի գրությունը լավացնելու վրա՝ մշակել են ու պարարտացըրել հողը։

Ծխախոտը, բոլոր այլ բույսերի նման, իրեն անհրաժեշտ սննդանյութերից միայն ածխաթթուն ե ստանում ողից, իր վերերկրյա կանաչ մասերով, գլխավորապես տերեփներով։ Տերեփների ցածի յերեսին գտնվում են մեծ քանակությամբ, այսպես կոչված հերձանցքներ։ Այդ հերձանցքների միջով ե, վոր ներծծվում ե ածխաթթու գազը (C_0_2), վորի ածխածինը (C) գործածվում ե բույսի կողմից ոսլա, շաքար, թաղանթանյութեր, ձարպեր, սպիտակուցներ և այլ որգանական նյութեր կազմելու ընթացքում, իսկ թթվածինը (O_2) նորից վերադառնում ե շըշապտի ողը։ Այս պրոցեսի համար անհրաժեշտ են լույս և ջերմություն։

Մատացած սննդանյութերը ծխախոտի բույսն ստանում է հողից, Այդ սննդանյութերը հողի մեջ գտնվում են, ազոտի, ֆոսֆորի, կալիումի, կրի, մագնիումի, յերկաթի, ծծմբի և այլ ելեմնատների տարբեր միացությունների ձևով: Բացի այդ, ծխախոտի բույսը ծծում ե ջուր, վորի մեջ ել գրանվում են ջրածինն ու թթվածինը, վոր նույնպես միանդամայն անհրաժեշտ են բույսի համար:

Իր արմատների վրա տարածված մազմղուկների միջոցով ծխախոտը ներծծում է ջրի մեջ լուծված վերոհիշյալ նյութերը և ոգտագործելով ողից ստացած տծխածինը, կազմում է իր մաքմակա կարեվոր մասերը:

Ծխախոտն ել, յուս բույսերի նման, իր նորմալ աճեցողության համար շատ ջուր և պահանջում: Անհրաժեշտ է, վոր ջրի անընդհատ հոսանք լինի արմատներից դեպի տերևները: Տերևներից ջուրը գոլորշիանում է հերձանցքների միջոցով:

Մեկ գրամ չոր նյութեր կազմելու համար ծխախոտը պահանջում է 300—500 գրամ ջուր:

Նայած թե ինչպիսի յե զբաղատի ջերմությունը, հողի և ողի խոնավությունը, ծխախոտի տերևներն ել լինում են նուրբ և խոշոր, կամ ընդհակառակը՝ մանր և կոպիտ:

Ծխախոտի բերքը հողից վերցնում ե ափելի շատ մոխրանյութեր և ազոտ, քան կարտոֆիլը, շաքարի ճակնդեղը և մի շաքարակույթներ:

Այսպես, որինակ՝ ծխախոտի միջին բերքը (10,5 ցենտների) կանաչ զբությամբ, մի հեկտարից վերցնում է հետևյալ քանակությամբ սննդանյութեր, կիլոգրամներով:

	Մոխր	Կալիում	Ա	Ֆոսֆորակ.	Ազոտ
Ծխախոտի տերեփները	228,5	66,3	78,6	10,6	51,6
» սողունները	92,1	40,1	18,0	13,1	40,1
Ամբողջ վերերկրյա մասաւան	319,2	106,4	99,9	23,7	91,7
Համեմատության համար բերենք նաև կարտոֆիլի և հացա-					

հատիկների բերքի միջոցով մի հեկտար հողից վերցրած նյութերի քանակը կիլոգրամներով:

	Մոխր	Կալիում	Ա	Ֆոսֆորակ.	Ազոտ
Կարտոֆիլ	169,1	95,8	22,5	28,6	58,9
Հացախույս	125,7	26,2	9,4	13,5	36,8

Այն հանդամանքը, վոր ծխախոտի մշակույթը հողից այսքան շատ սննդանյութեր և վերցնում, ցույց ե տալիս, թե վորքան հոգածար պիտի ծխախոտագործը դեպի հողը, նրա մշակումն ու պարագաները, վորպեսը՝ ծխախոտի մշակույթն ապահոված լինի անհրաժեշտ սննդանյութերով:

ԾԽԱԽՈՏԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ծխախոտի քիմիական կազմը կախված է նրա մշակության հողակիմայական պայմաններից, ծխախոտի սորտից, նրա զարգացման փաղայից և այլն:

Բացի այդ, թարմ ծխախոտը (տերևները) և արգեն մշակման յենթարկվածը – տարբեր կազմություն ունեն՝ ծխախոտը հավաքելուց հետո, մշակելու, չորացնելու ընթացքում փոխում ե իր կազմը:

Ծխախոտի թարմ տերևները մոտ $85-95\%$ ջուր են պարունակում (մացածը չոր նյութեր են), իսկ չորացրած տերևները մեջ ջուրը կազմում է ընդհանունը $8-13\%$. Փոխվում են և այլ բաղադրիչները:

Հստ Նեսուելերի ծխախոտի թարմ տերևների չոր նյութը բաղկացած է 80% որդանական, այրվող նյութերից և 20% հանքային նյութերից (մոխրանյութերից):

Այժմ համառոտակի կանգ առնենք այն նյութերի վրա, վարոնք գտնվում են ծխախոտի մեջ և այս կամ այն նշանակությունն ունեն նրա վորակը վորոշելու տեսակետից:

Նիկոտինը բուսական ալկալոյիդ կոչված, ազոտ պարունակող, բարձ, որդանական նյութ է: Մաքուր վիճակում նիկոտինն անդույն, յուղանման հեղուկ է: Նիկոտինը մարդկանց համար խստ թունավոր նյութ է: Խոչպես նշում և ակաղեմիկոս Պըյանիշնիկովը, մեկ սիգարի մեջ գտնվող նիկոտինի քանակը գերազանցում է մարդու համար մահացու դոզան, և յեթե մեկ սիգարից մարդ չի մնումում, ապա այդ այն պատճառով, վոր նիկոտինի մի մասն այրվում է և որկանիզմի մեջ չի մտնում:

Նիկոտինի քանակը ծխախոտի մեջ խիստ տարբեր և կախված և ծխախոտի սորտից, վորոշման ժամանակից և մի, շարք այլ պայմաններից: Նույնիսկ միենույն բույսի վրա ծխախոտի տարբեր տերևներ տարբեր քանակությամբ նիկոտին են՝ պարունակում:

Ընդհանուր առմամբ կարելի յէ ասել, վոր նիկոտինը կարող է կազմել ծխախոտի $5-6\%$ և նույնիսկ ավելին, սակայն ծխելու համար պատրաստված ծխախոտի մեջ նրա քանակը սովորաբար հասնում է 3% : Սրանից ավելի շատ նիկոտին պարունակելու դեպքում ծխախոտն անհնար և ծխել:

Առվորաբար գլուխակների ծխախոտների համար խորհուրդ են տալիս 1% վոր ավելի նիկոտինի պարունակություն:

Ծխախոտի լավ տեսակների մեջ նիկոտինը շատ չի լինում, ցածր տեսակի, վատորակ ծխախոտների մեջ՝ ընդհակառակ (որինակ մախորկան շատ նիկոտին և պարունակում): Վորքան նուրբ և ծխախոտի տերել, այնքան քիչ և նրա մեջ նիկոտինը:

ՍԻՆԵԿՈՒՑԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Ծխախոտի մյուս բաղադրիչ մասերն ազոտ պարունակող նյութերն են—սպիտակուցները, վորոնք ծխախոտի տարբեր սորտերի մեջ գտնվում են տարբեր քանակությամբ:

Սպիտակուցային նյութերի մեծ քանակությունները ըոլուրովին ցանկալի չեն ծխախոտի վորակի տեսակետից:

Բանն այն է, վոր սպիտակուցային նյութերի այրման հետևանքով ստեղծվում են այնպիսի այրման պրոդուկտներ, վորոնք անդուրակի համ, հոտ և դառնություն են տալիս ծխախոտին:

Վատ, ցածր վորակի սորտերի ծխախոտի մեջ շատ սպիտա-

կուցային նյութեր են լինում, իսկ բարձրորակ ծխախոտներն ընդհակառակը՝ քիչ:

Տարբեր սորտի ծխախոտների մեջ սպիտակուցային նյութերի պարունակությունը ցույց են տալիս հետեւալ թվերը՝

Մախորկա (Վորոնեժի շրջանի) $16,37\%$ սպիտ.

Մախորկա (Չերնիգովի շրջանի) $13,57\%$ » » »

Տրավլիգոն $9,22\%$ » » »

Սամսոն $9,30\%$ » » »

Դյուբեր $7,79\%$ » » »

Հյուսիսային (Նորդի կարողինա) $6,32\%$ » » »

Այս թվերը ցույց են տալիս, վոր վորքան բարձրորակ և ծխախոտը, այնքան քիչ սպիտակուցային նյութ և պարունակում նա:

ՍԱԼՄԵՏԵՐ (ՍԵԼԻՏՐԱ)

Ծխախոտի մեջ գտնվող այս նյութը—հանքային ազոտային նյութ և ազոտական թթվի աղը: Այս նյութերն այլ կերպ կոչվում են նիտրատներ. նիտրատները ծխախոտի բույսի մեջ կուտակվում են մանավանդ աղոտով հարուստ հողերի վրա: Ցենթադրում են, վոր նիտրատների կուտակմանը նպաստում են ծխախոտի ծերատումը:

Նիտրատների քանակը բույսի աճման ընթացքում միշտ փոփոխվում է: Կրամնողարի ծխախոտագործական ինստիտուտի աշվալների համաձայն, նիտրատային աղոտի քանակը ծխախոտի զարգացման ընթացքում փոխվել և այսպես:

	Ցերիտասարդ բույսի մեջ	Մազկման շրջանում
Արմատի մեջ	$0,178\%$	$0,037\%$
Ցողունի »	$0,614\%$	$0,270\%$
Տերեների »	$0,284\%$	$0,179\%$

Նիտրատների մի մասը ծխախոտի բերքի մշակման ընթացքում քայլայվում է, սակայն պատրաստի ծխախոտի մեջ մնացած մասը նպաստում է նրա լավ այրվելուն: Այստեղ, ի դեպ, կարելի յէ ասել, վոր պատրաստի ծխախոտի լավ այրվելու համար, նրան յերբեմն մարդկի իրենք արհեստական կերպով մի քիչ սալպետեր են խառնում:

ԱՆՁՈՒՏ ՆՅՈՒԹԵՐ

Անձուտ նյութերից թարմ տերևները պարունակում են թաղանթանյութ. այս որգանական նյութն իրենից ներկայացնում է բուսական բջիջների մաշկը կամ պատերը:

Ցեթե ծխախոտի տերևի մեջ թաղանթանյութը հավասարաչափ տարածված է բոլոր մասերում, վորը չափազանց ցանկալի յե համարվում, նման դեպքում նա նպաստում է ծխախոտի լավ այրվելուն. (թաղանթանյութը թարմ տերևի մեջ մոտ 10% է կազմում, իսկ չոր նյութերի մեջ՝ $30-50\%$):

Սակայն, յեթե տերևների մեջ սկսում են զարգանալ փայտանյութերը, վորոնք կազմելով տերևների ջղերը, կոշտացնում, կոպտացնում են ծխախոտը, այդ արդեն անցանկալի յե համարվում. (մանավանդ սիդարի ծխախոտների համար):

ԱՆՁՈՒՏ ԵԿԱՏՐԱԿԱՏԵԽՆ ՆՅՈՒԹԵՐ

Ծխախոտի թարմ տերևների մեջ այս նյութերից աչքի յե ընկնում ու լան. ծխախոտի տերևները չորացնելուց, մշակելուց հետո, նրանց մեջ ուղան խիստ պակասում է, իսկ նրա փոխարեն շատանում են լուծելի ածխաջրատները՝ զանազան շաքարանյութերը: Թարմ տերևների մեջ վերջիններս շատ քիչ են: Այսպես որինակ՝ Մյուլիբ-Թյուրդառն ծխախոտի թարմ տերևների մեջ գտել են $30-40\%$ ույան $0.8-1.2\%$ լուծելի ածխաջրեր՝ շաքարանյութեր: Անձուտ եկստրակտային նյութերի, ածխաջրատների ներկայությունը ծխախոտի մեջ ցանկալի յե համարվում:

Նկատված է, վոր վորքան բարձր է ծխախոտի վորակը, այնքան ավելի շատ են նրա մեջ այս խմբի նյութերը: Նկատված են նաև, վոր վորքան շատ են այս խմբի նյութերը՝ ածխաջրերը ծխախոտի մեջ, այնքան պակաս են նրա մեջ սպիտակուցային նյութերը: Իսկ մենք արդեն ասացինք, վոր սպիտակուցների մեծ չափով ներկայությունը ծխախոտի մեջ անցանկալի յե համարվում: Ուրեմն, ինչ վոր անուղղակի կապ կա ածխաջրատների և ծխախոտի ցանկալի հատկությունների միջև:

Կրասնոգարի ծխախոտագործական ինստիտուտի հետազոտությունները ցույց են տվել, վոր յերբ լավ վորակի ծխախոտը պարունակում է $17,6-60\%$ ածխաջրեր, ծխախոտի տարրեր տեսակները, վորոնք ըստ վորակի մի նվազող շարք են կազմում, ունեն ածխաջրերի հետզհետե նույնագիս նվազող քանակություն,

այսինչ սպիտակուցային նյութերը, ընդհակառակը՝ ծխախոտի վորակն իջնելու հետ ավելանում են (լավորակ ծխախոտների մեջ $6-7\%$ ից նրանց պարունակությունը վատորակների մեջ հասնում է $14-16\%$):

ՈՐԳԱՆԱԿԱՆ ԹԹՈՒՆԵՐ

Ծխախոտի մեջ որգանական թթուների ընդհանուր պարունակությունը կարող է հասնել մինչև $15-16\%$, սակայն, սովորաբար նրանք ավելի քիչ են լինում:

Ծխախոտի մեջ պատահող թթուներից աչքի ընկնողներն են՝ ինձորաթթուն, կիտրոնաթթուն, թրթնջկաթթուն և այլն:

Ցենթադրում են, թե վորքան շատ են թթուները, այնքան ավելի լավ վորակի պիտի լինի ծխախոտը (նիկոտինը պակաս, լավ այրվող և այլն), սակայն այդ դեռ ապացուցված չի համարվում:

ԵԹԵՐԱՅԻՆ ՑՈՒՂԵՐ

Ծխախոտի եթերային յուղերը կազմված են հոտավետ, անուշահոտ մի շարք բարդ եթերային յուղերի խառնուրդից:

Եթերային հոտավետ յուղերը ծխախոտի բարձր վորակը պայմանավորող նյութերից մեկն են. նրանք ծխախոտին տալիս են հոտավետություն, արոմատ:

Ծխախոտի մեջ կան նաև խեժանյութեր, սակայն նրանց մասին մենք այստեղ չենք խոսի:

ՍՈԽԻՐԱՅՆՑՈՒԹԵՐ

Ծխախոտը կազմող նյութերի շաքում նշանակալի տեղ են բռնում մոխրանյութերը՝ հանքային նյութեր, վորոնք չոր նյութերի $15-23\%$ ուն են կազմում:

Ծխախոտի քիմիայի գիտուն՝ պրոֆ. Շմուկի աշխատանքները ցույց են տվել, վոր վորքան ցածր է ծխախոտի վորակը, այնքան նա շատ մոխիր է պարունակում:

Ծխախոտի մոխիրի մոտ 30% կազմում է կալիումոքսիտ (K_2O), համարյանույնքան և կալիոր (CaO), մնացած մասը կազմում են այլ հանքային նյութերը՝ նատրիում (Na_2O), մագնիսիում (MgO), յերկաթ (Fe_2O_3), ֆոսֆոր (P_2O_5) ծծումբ (SO_3), սիլիցիում (SiO_2), քլոր (Cl) և այլն:

Կալիումի և նատրիումի կարբոնատները (ածխաթթվա-

յին աղերը) նպաստում են ծխախոտի լավ այրվելուն, իսկ նույն այդ հիմքերի (ինչպես և հողալիական մետաղների) քլորիդ ներն՝ ընդհակառակը:

Տարբեր հեղինակներ գտնում են, վոր նորմալ այրվելու համար, ծխախոտը պետք է պարունակի $0,4-0,6\%$ վոչ ավելի քաղցր և համենայն դեպք 3% ից վոչ պահան կարիքում ու քսիդ (Կ₂O), Յեթե քլորի պարունակությունը համար 2-3 և ավելի $0,5\%$, ապա ինչքան ել շատ լինի կալիումը, մինչույն ե, ծխախոտը գուրկ կիրակ լավ այրվելու հատկությունից:

Մի քանի խոսք ջերմության, լույսի և հոգի խոսքության և սրանց ծխախոտի մշակույթի վրա ունեցած ազդեցության մասին.

Լույսը և ջերմությունը, ըստ Մայերի (Հոլլանդիա), ազդում են ծխախոտի բաղադրության վրա: Վարպետ որինակ կարող է ծառայել այն հանգամանքը, վոր ջերմոցում մեծացրած ծխախոտն ավելի շատ նիկոտին և պարունակում, քան այն, վոր բաց ողում և աճել (ավելի ցածր ջերմաստիճանում):

Մի ուրիշ փորձ ցույց է տվել, վոր թույլ լուսավորության դեպքում, նիկոտինի քանակը ծխախոտի բույսի մեջ ավելի քիչ ե, քան ուժեղ լույսի տակ աճած ծխախոտի մեջ:

Հողի խոնագությունը, ըստ Մայերի, հետեւյալ ձեռվ և աղդում ծխախոտի մեջ նիկոտինի պարունակության վրա:
Հողի խոնավությունը $0,5-0,7\%$ նիկոտինի պարունակությունը $0,5-0,7\%$

80

1,2

60

1,7

40

3,1

Ուրեմն՝ հողի մեջ, խոնավության պակասելու հետ, ավելանում ե նիկոտինի տոկոսը ծխախոտի մեջ, մի բան, վոր ցանկալի չե:

Բացի այդ, վորովհետեւ ջրի պակասության դեպքում, բույսերը պակասեցնում են իրենց գոլորշիացման մակարդակը, ուստի չոր կլիմայական պայմանները նպաստում են մանր, հաստ, կոպիտ և նիկոտինով հարուստ տերեների դարգացմանը: Այս դեպքում կանոնավոր ջրելք կարող ե բարձրացնել ծխախոտի վորակը:

Այժմ մենք արդեն ծանօթացանք ծխախոտի բաղադրության հետ, հնարավոր ե անցնել ծխախոտը պարարտացնելու ուսմունքի հիմունքների լուսաբանմանը:

Բ. ԾԽԱԽՈՏԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

ՊԱՐԱՐՏԱՑՈՒԹԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պարարտանյութերի եֆեկտիվությունը կախված է մի կողմից բույսի աճման պայմաններից, մյուս կողմից՝ տնտեսության կազմակերպման յեղանակից: Վորքան բարձր և սոցիալիստական յերկրագործության զարգացման աստիճանը, այնքան ավելի արդյունավետ և պարարտանյութերի գործածությունը:

Ծխախոտի դաշտերի պարարտացումը չափազանց ուշադիր և գգուշ մոտեցում և պահանջում: Ծխախոտն այն կուլտուրաներից է, վորի բերքը և վորակը մեծ չափով ու ավելի ակնահայտ կերպով, քան մյուս մշակույթների դեպքում, կախումն ունի տարբեր պարարտանյութերի գործածությունից: Այս տեսակետից, ծխախոտի սացիոնալ պարարտացումը չափազանց խոշոր նշանակություն և ստանում ծխախոտի բերքն ու նրա այս կամ այն, մեզ համար ցանկալի վորակն ստանալու, այդ վորակը մարդու ուղարձին մասն փոխութելու պրոցեսը մարդու կողմից զեկավարելու տեսակետից:

Ծխախոտի պարարտացումը բարդ և նրանով, վոր չի կարելի ծխախոտի մշակման բոլոր դեպքերում ել պարարտացման նույն մոտեցումն ունենալ. այդ մեծ չափով կախված է նրանից, թե ինչպիսի արտադրանք ենք ուզում ստանալ: Այսպես որինակ, յեթե բարձր վորակի ծխախոտի սորտերը մենք առաջ կերպով չենք պարարտացնում աղոտային պարարտանյութով, կամ գումազրով, բավարարվելով ավելի քիչ, բայց բարձր վորակի բերքով, ապա մախորկայի և այլ հասարակ ծխախոտների դեպքում, մենք հակառակ մոտեցում ենք ունենում մեծ բերք ստանալու համար:

ԾԽԱԽՈՏԻ ՄՇԱԿՈՒՑՅԻ ՀԱՄԱՐ ԱՆՑՐԱԺԵՏԸ ՀՈՂԱՑԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Միայն աղուաները, ճանաւային հողերն ու ավագուտներն են, վորոնց վրա առայժմ անհնար և ծխախոտի մշա-

կությունը, մնացած բոլոր հողերն այս կամ այն արճեստական ձեռա-նարկումից հետո (հողի մշակությունը, պարարտացումը և այլն), կարող են պիտանի լինել ծխախոտի մշակության համար։ Սա-կայն այդ դեռ չի նշանակում, թե ծխախոտի համար բոլոր հո-ղերն ել նույն նշանակությունն ունեն։ Հողի տեսակից են կախ-ված ծխախոտի արտադրանքի մի շաբք կարևոր հատկություն-ները։

Ծխախոտը պահանջում է խոր, տաք և բարարար խոնավու-թյուն պարունակող հողեր։ (սակայն հենց այստեղ նշենք, վոր չափից ավելի խոնավությունը խիստ վատ և աղջում ծխախոտի վորակի վրա)։ Հողը պետք էլ փուխր և ստրոկատուրային լինի, վորակսղի խոնավությունը, ողն ու ջերմությունը թափանցեն նրա մեջ։

Հողի մեխանիկական կողմի տեսակետից, ծխախոտի համար նպաստավոր են թեթև, մի քիչ ավազոտ, կամ կավա-ավազային հողերը և լավ են, յերբ հողը մի քիչ ել խճոտ և լինում, իսկ նրա կառուցվածքը կնձկային։ Հողի նման մեխանիկա-կան կազմը պայմանավորում է նրա ֆիզիկական հատկություն-ները՝ այդպիսի հողն ավելի փուխր և լինում (ծխախոտի խոր գնացող արմաները կարողանում են լավ զարդանալ ու անհրա-ժեշտ սննդանյութեր մատուկարարել բույսի վերերկրյա մասե-րին), ողը և ջերմությունն ել լավ են խաղում, թափանցում հողի ներսը. մի բան, վոր մեծ նշանակություն ունի ծխախոտի մշակության համար։

Նկատված են, վոր յեթե հողը մի քիչ խճոտ և ավազա-խառն (բայց ավազի քանակը հողի մեջ նրա 50% ից վոչ ավելի), ապա այդպիսի թեթև հողերից, չնայած մի քիչ պակաս բերք և ստացվում, քան յենթադրենք ուժեղ սեահողի կամ կավա-հողի վրա, այնուամենայնիվ ծխախոտի բերքի վորակն ավելի բարձր և լինում։

Սակայն չափից ավելի ավազոտ հողերն անցանկալի յեն ծխախոտի մշակության համար։

Ծխախոտի մշակությունը միանգամայն հնարավոր և նաև կավային հողերի վրա։ Ընդհանրապես կավային հողերի վրա ծխախոտը մեծ բերք և տալիս. սակայն նկատված են, վոր այդ բերքը վորակով համեմատաբար ցածր և լինում (արոմատը պա-կաս, այրվելու անբավարար հատկություններ և այլն)։

Մանր կավային հողերի վրա ծխախոտի վեգետացիան (աճ-ման շրջանը) յերկարում ե. դրա համար ել կավային հողերի վրա ծխախոտի հաջող մշակությունը հնարավոր և տաք շրջաններում, ուր կարելի յե ծխախոտը շուտ դաշտ տեղափոխել և ապահովել նրա ժամանակին հասնելը։

Դեպի հումուսի (հողի որգանական բարդ նյութերի) պարու-նակությունը հողի մեջ ծխախոտը շատ պահանջկուտ ե, ըստ վո-րում, մի կողմից՝ հումուսով աղքատ հողերում ծխախոտը լավ չի աճում, մյուս կողմից, չափից ավելի հումուսն ել խիստ վատ և անդրադարձում ծխախոտի վորակի վրա։

Այս հանգամանքը պահանջում է լուրջ մոտեցում՝ ծխախոտն այս կամ այն հողի վրա մշակելու և մանավանդ՝ պարարտացնելու դեպքում։

Ծխախոտի տարբեր տեսակները և սորտերը տարբեր պա-հանջկություն ունեն դեպի հումուսի պարունակությունը հողի մեջ։

Ընդհանուր առմամբ հումուսով հարուստ հողերի վրա (ինչ-պիսին են ուժեղ սեահողերը) ստացվում է ծխախոտի մեծ բերք, սակայն համեմատաբար ցածր վորակի։ Բարձրորակ սորտերի ծխախոտն այս դեպքում ստացվում է շատ ուժեղ (թունդ), կոչտ, վատ այրվող և քիչ հոտավետ, գույնը՝ մուգ, կարմրավուն և վոչ դեղին։ Հատկապես գլանակների պատրաստման համար ծա-ռայող ծխախոտը բոլորովին չի հաշտվում հողի մեջ չափից ավելի հումուս լինելու հետ։

Սակայն, բոլորովին այլ մոռեցում պետք և ունենալ ծխա-խոտի հասարակ սորտերի և մախորկայի մշակության դեպքում, վորոնք որինակ, ուժեղ սեահողերի վրա տալիս են մեծ բերք, վորի վորակն ել այդ սորտերի դեպքում բավարար և համարվում։

Ծխախոտի մշակությի վերաբերմունքը դեպի հողի հումուսը, ինչպես կտեսնենք, մեծ նշանակություն ունի ծխախոտն որգա-նական պարատանյութերով և ազոտով պարարտացնելու տեսու-կետից։

ՈՐԳԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ-ԳՈՍԱՂԵ

Թեև հումուսի չափից ավելի լինելը հողի մեջ անցան-կալի յե ծխախոտի համար, բայց այդ դեռ չի նշանակում, թե

հողը բավարար չափով հումուս չպետք և ունենա: Արտադրության մեջ և մանավանդ մեր հողային պալմաններում քիչ չեն՝ դեպքեր, յերբ ծխախոտապործական տնտեսությունները պետք են լուրջ հոգ տանեն հողը հումուսով՝ որդանական նյութերով հարստացնելու մասին:

Բանը նրանումն ե, վոր հում ուսը, բացի ծխախոտին անհրաժեշտ սննդանյութեր մատակարարելուց, նաև լավացնում և հողի ֆիզիկական հատկությունները:

Հողի այդ հատկությունները, ինչպես և մշակվող բույսը սննդանյութերով ապահովելու նպատակով, գործ են ածում որդանական պարագաներու նյութերու Այս պարագաներից ամենից տարածվածը գոմաղը ն ե:

Գոմաղը լավացնում ե հողի գրությունը, նպաստում և հողի մեջ խոնավության պահպանմանը «տաքացնում ե հողը» և քայքայելով, ծառայում ե բույսի համար վորպես մնունդ:

Մանավանդ մեր ցածրագիր շրջանում, հողն որդանական նյութերով պարագաները մեծ նշանակություն ունի բարձր բերք ստանալու գործում:

Տարբեր հողերի վրա տարբեր քանակությամբ գոմաղը պետք ե գործածել. պետք ե միշտ հիշել, վոր իր մեջ շատ ազոտային նյութ պարունակելու հետեւանքով, չափից ավելի քանակությամբ գոմաղը, թեև բարձրացնում ե բերքի քանակը, բայց կարող ե իջեցնել ծխախոտի վորպես:

Ուստի, գոմաղը չափը տվյալ պայմաններում, պետք և փորոշել այն հաշվով, վոր բերքը բարձրանա մինչև այն աստիճանը, քանի դեռ ծխախոտի վորպես չի ընկել:

Գոմաղը ընդհանրապես ընդունված դողան ծխախոտի համար 18 տոնն ե—մեկ հեկտար ին, սակայն վերոհիշյալ պայմաններն ինկատի ունենալով, այդ դողան կարելի յե մեծացնել կամ փոքրացնել:

Գոմաղը ծխախոտի դաշտը պետք ե մացնել կամ աշնանից ն կամ վաղ դարնանից՝ ծխախոտը ջերմոցներից դաշտ տեղափոխելուց առնվազն 2 ամիս առաջ: Գոմաղը չպետք ե թարմ լինի. նա պետք ե արգեն մասամբ քայքայված լինի:

Ծխախոտի բերքը բարձրացնում ե նաև կանաչ պարագաներու մը, սակայն հնարավորություն չունենալով այստեղ իրուն կանաչ պարագաներու մասին, բավարպես միայն այդ հանգամանքը նշելով:

ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Մենք շատ քիչ փորձ ունենք ծխախոտը հանքային նյութերով պարագաներու գործում, ըստ մեր ծխախոտագործական տարբեր շրջանների:

Հիմնվելով մեր հարեան յերկրների փորձի վրա և ի նկատի ունենալով մեր հողային ու կիմայական պայմանները, ծխախոտի հանքային պարագաներու մասին կարելի յե ասել հետեւալը. մեզ մոտ ծխախոտը պետք ե պարագաներ ազատի, Փռությունի և յերբեմն կալիումի պարագաներով:

ԱԶՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ծխախոտի ազտային պարագաներու ընթացքում դարձյալ պետք ե ի նկատի ունենալ այն հանգամանքը, վորի վրա մենք կանգ առանք վերը՝ հողի հումուսի և որդանական պարագաներու մասին խոսելիս. չնայած ծխախոտի բերքն ազտային պարագաներու թերից բարձրանում ե, բայց դարձյալ տվյալ հողի համար չափից ավելի ազտային պարագաներու տալու դեպքում բերքի վորպես իջնում ե. ծխախոտի մեջ ազերանում են սպիտակուցային նյութերն ու նիկոտինը, ծխախոտն ստանում ե անցանկանալի հատկություններ՝ վատ համ, գառնություն:

Մակայն, այդ վախը, վոր պետք ե հաշվի առնել բարձրորակ ծխախոտների մշակման ընթացքում, կարելի յե բոլորովին հաշվի չառնել հասարակ ծխախոտների և մախորկայի մշակության դեպքում:

Այնուամենայնիվ, յեթե բաձրորակ ծխախոտը դուրկ ե անհրաժեշտ քանակության ազուրից, նա լավ չի աճի և շատ քիչ բերք կտա:

Մեր պայմաններում՝ ծխախոտն առաջին հերթին պետք ե պարագաներ ազուրային պարագաներու մասին մեր ցածրագիր շրջանում, բայց գույնի, համուսուվ ազքատ հողերի վրա:

Հումուսով հարուման սեանովելի վրա ծխախոտի դաշտը կարելի յե չպարագաների պայմանին պարագաներով, քանի վոր հա-

բուստ սեահողերի ազոտի պաշարը, համախ նույնիսկ ավելի յե, քան հարկավոր և ծխախոտի լավ բերք ստանալու համար, Այդպիսի հողերում պետք և գործածել ուրիշ պարարտանյութեր, վորոնց մասին կխոսենք ստորև:

Սյապես ուրեմն, ծխախոտի համար անհրաժեշտ ազոտային պարարտանյութերի քանակը վորոշելիս պետք և հիշել, վոր վորաքան շատ ազոտային նյութեր ենք տալիս ծխախոտին, այնքան շատ և ավելանում նրա բերքը, սակայն մի վորոշ առտիճանից նրա վորակն սկսում է իջնել:

Ծխախոտի համար ընդունված ազոտային պարարտանյութերի միջին դոզան կազմում և 30—45 կիլոգրամ ազոտ ամեն մի հեկտարին, այս կամ այն ազոտական ուղարարտանյութի ձևով: $20^0/_{\text{0}}\text{-անոց}$ ցիանամիղի, կամ ամմոնիում սուլֆատի դեղքում, դա հավասար և 150-ից 225 կիլոգրամ պարարտանյութի:

Փորձերը ցույց են տվել, վոր գործնականապես ծխախոտի համար առանձնապես նշանակություն չունի այն հանդամանքը, թե ազոտային պարարտանյութերից վորն և արվում նրան: Լավ ազդեցություն են ունենում սելիտրան, ամմոնիում մուլֆատը և այլն: Գետք և յենթալրել, վոր կալցիումը իւնամիդն ել միանգամայն բարենպաստ ազդեցություն կունենա ծխախոտի դաշտը նախորոք նրանով պարարտացնելու դեղքում:

Ազոտային պարարտանյութերից՝ սելիտրան կարելի յե գաշա մացնել յերկու նվազով՝ կեսը ծխախոտը դաշտ տեղափոխելուց առաջ, իսկ մյուս կեսը՝ ծխատութ դաշտ տեղափոխելուց $15—20$ որ հետո:

Մեր պայմաններում ազոտական պարարտանյութերն ուժեղ կերպով բարձրացնում են բերքը, մանավանդ յեթե նրանց հետ միասին գործ են ածվում գուգութ փոսիորական պարարտանյութեր:

ՑՈՒՖՈՐԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Մեր պայմաններում ծխախոտի համար վոչ պակաս նշանակություն ունեն փոսիորական պարարտանյութերը, վորոնք նույնապես բարձրացնում են ծխախոտի բերքը: Սրանցից սովորաբար մեզ մոտ գործ և ածվում սուլիտ փոսի գաշտը:

Մինչեռ, ինչպես տեսանք, ազոտական պարարտանյութերից ավելի բարձր դոզաներն իջնեցնում են ծխախոտի վորակը,

սուլիտի վորակը, ընդհակառակը, նպաստավոր ազդեցություն և գործում ծխախոտի վորակի վրա, նրա ասորտիմենտի վրա:

Առաջնարժությունը մեզ մոտ շատ լավ կարող և ազդել ազոտական պարարտանյութերի հետ միասին գործածելու դեպքում: Նա կարող է նպաստել այն բանին, վոր ազոտական պարարտանյութերը բարձրացնեն բերքը, սակայն ծխախոտի վորակը պահպանվի, չի չնի, ինչպես կարող ե տեղի ունենալ միակողմանի ու առատ ազոտական պարարտացման դեպքում:

Բացի այդ, հարուստ սեահողերի դեպքում, ուր բարձր սորտերի ծխախոտի մշակության համար չափից ավելի առատ ազոտ և պարունակվում, նրա բացասական ազդեցությունը ծխախոտի վորակի վրա կարելի յե մեղմացնել ֆոսֆորական պարարտանյութերը, որինակ՝ սուլիտ փոսի գործածելով, սակայն, նման շատ հարուստ հողեր մենք շատ քիչ ունենք, ուստի մեծ մասամբ ծխախոտի համար պետք և գործածել ազոտական և ֆոսֆորական պարարտանյութերը միատեղ Այսուեղ անհրաժեղա և զգուշացնել, վոր ցիանամիղը և սուլիտի վորակը իւնական չի կարելի, քանի վոր այդ դեպքում սուլիտի վորակը միջի մննդանյութն ավելի զժիարալույթ և դառնում և ավելի քիչ և սուլիտի վորակը կողմից: Այդ և պատճառը, վոր խորհուրդ և տրվում այս պարարտանյութերը հողի մեջ մացնել առանձին առանձին:

Սովորաբար, սուլիտի վորակը չափը (դոզա) կազմում և $45-ից$ 60 կիլոգրամ P_2O_5 (սուլիտի վորակը նշանակալից մասը). այդ նշանակում ե, վոր յեթե մենք ունենք $14^0/_{\text{0}}\text{-անոց}$ սուլիտի վորակը, ապա ամեն մի հեկտարին պետք և տալ 320 kg 428 կիլոգրամ պարարտանյութ:

ԿԱԼԻՌՈՒՄ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Ծխախոտն առհասարակ «կալիում սիրող բուլսեր»-ի շարքին և պատկանում: Նա մի հեկտարից վերցնում և մոտ 100 կիլոգրամ կալի (K_2O): Յենթալրում են, վոր մյուս կողմից նա ավելի հեշտ և հայթայթում կալիումի աղերը հաղից, քան մի շարք այլ գաշտային մշակութներ, հողային նույն պայմաններում:

Համենայն դեպք, յեթե հողն աղքատ և կալիումի աղերով:

ծիսախոտը, ինչպես և մյուս բույսերը, լավ չի աճում, ցածր բերք եւ տալիս: Այդպիսի գեղքում ծխախոտի գաշտը պետք է պարարտացնել կալիումի պարարտանյութերով:

Կալիումի պարարտանյութերը գործ են ածվում մեկ ել այն գեղքում, յերբ հողը հարուստ ե աղոտով (ուժեղ սեահողերը) և աղջոտ՝ կալիումով. այդ գեղքում ֆոսֆորի և կալիումի պարարտանյութերն ապահովում են թե բարձր բերքը և թե ծխախոտի բարձր գորակը:

Սակայն մեր հողերը մեծ մասամբ հրաբխային ծաղում ունենալով, իրենց մեջ շատ համար մեծ քանակությամբ կալիումի աղեր են պարունակում և այն աստիճան շատ, զոր մյուս կուլտուրաները, կալիումի աղերով պարարտացնելու գեղքում, բերքը համարյա թե չի բարձրանում:

Ծխախոտը կալիումի աղերով պարարտացնելու փորձեր մեզ մոտ առայժմ չեն կատարվել, այնուամենայնիվ, ի նկատի ունենալով մեր հողային պայմանները, կալիումի պարարտանյութեր կարենի յե մասսայականորեն գործ չածել, մինչև խնդրի փորձական լուսաբանումը:

Իմանալու համար, թե զոր հողերի վրա կարելի յե կալիումի պարարտանյութեր գործ չածել, ընդունված ե ոդտվել հետեւյալ դրությունից:

Հայտնի յե, զոր կալիումով հարուստ հողերի վրա ծխախոտի մեջ մեծ քանակությամբ կալիումոքսիդ (K₂O) և պարունակում: Այդ կալիումոքսիդի քանակը, յեթե ծխախոտի մեջ քրորը շատ չե, ինչպես տեսանք զրբույզի սկզբում, պայմանավորում է ծխախոտի բավ այրիվելու հատկությունները: Կալիումոքսիդը ծխախոտի մեջ 3 տոկոսից պակաս չպետք ելինի (ըստ Նեսսլերի անհրաժեշտ ե, զոր ծխախոտը պարունակի նույնիսկ 5-6% K₂O): Յեվ անա, յեթե ծխախոտի մեջ կալիումոքսիդը 3 տոկոսից պակաս չե, ապա այդպիսի ծխախոտի գաշտը կարելի յե պարարտացնել միայն աղոտական և ֆոսֆորական նյութերով, իսկ կալիումի պարարտանյութեր գործ չածել:

Յեթե կալիումի պարարտանյութերի գործածման համար հարմար պայմաններ կան, ինչպես օրինակ կալիումով աղջատ, բայց գույնի քիչ հումուս պարունակող հողերում, խրախուսվում ե կիրառել այսպես կոչված լրիվ հանքային պարա-

տացում. այսինքն՝ տալ հողին և ազոտական, և ֆոսֆորական և թե կալիումի պարարտանյութերից տարածված են ո ի վ ի ն ի տ ը, կ ա ր ն ա լ ի տ ը և կ ա լ ի ո ւ մ ք լ ո ր ի գ ը: Դժբախտաբար այս նյութերն իրենց մեջ մեծ քանակությամբ քրոր են պարունակում, զոր մասավանդ ծխախոտի համար, ինչպես տեսանք վերը, անցանկալի յե:

Այս տեսակետից պետք ե գերագասել մոխիրը, վորպես կալիումի պարարտանյութ. մոխիրն իր մեջ բացի կալիումոքսիդից, պարունակում ե նաև ֆոսֆոր և կիր, իսկ զոր ամենակարենիվորն ե, իր մեջ սիլիկանիտի նման քրորիդներ չի պարունակում, զորի համար կարող ե խոշոր չափով նպաստել ծխախոտի վորակի բարձրացմանը, մեծացնելով վերջինիս մեջ կալիումոքսիդի 9%: Կալիումի պարարտանյութերը գործածելու գեղքում ընդունված ե ամեն մի հեկտար ծխախոտի դաշտին տալ այնքան պարարտանյութ, զոր նրա մեջ լինի 50-ից 75 կելոգրամ կալիումոքսիդ (K₂O):

ԱՅՍՊԵՍ ՈՒԽԵՄՆ, ծխախոտի գաշտերը մեզ մոտ անշուշտ պարարտացման կարիք են զգում: Վորպես պարարտանյութ պետք ե ոգտագործել գոմազըն (ուր նա կա), իսկ հանքային պարարտանյութերի գեղքում: աղոտական և ֆորական պարարտանյութերը: Առաջիններից են ամմոնիումուլֆատը, սելիտրան և ցիանամիգը, իսկ ֆոսֆորական պարարտանյութերից՝ սուլֆոփոսֆատը:

Կալիումի պարարտանյութերից, մեր պայմաններում, ամենանպատակահարմարը պետք ե համարել մոխիրը:


Ազոտային նյութերով և գոմազըն պարարտացնելիս, մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, թե ինչ սորտի ծխախոտի հետ գործ ունենք. այսպես, մինչդեռ հասարակ ծխախոտներն առատ աղոտային պարարտացումից չեն վախենում և ստացվող մեծ բերքը վորակի տեսակետից ել: այդ տեսակի ծխախոտի համար բավարար ելինում, բայց բարձր, թանգարժեք սորտերի ծխախոտն աղոտով պարարտացնելիս, պետք ե զգուշ լինել զորպեսպի վերջինս չաղդի նրա վորակի վրա:

Հանքային պարարտանյութերը կարելի յե ծխախոտի գաշտը

մոցնել վաղ գարնանը, ծխախոտը դաշտ տեղափոխելուց 20 կամ
տվելի որ առաջ:

Հատուկ ուշագիր մոտեցում պետք և ունենալ ծխախոտի
պարաբացման գործին ցանքաշրջանառություն ունեցող տնտե-
սություններում: Պետք ե իմանալ թե, վոր դաշտն ինչ նյութով
պարաբացնել:

Այսուեղ նշենք, վոր յեթե յերկրորդ կամ յերրորդ տարին
նույն տեղը ծխախոտ և ցանքում, ապա պարաբացումն անհրա-
ժեղաւ ե (թե ազոտով և թե ֆոսֆորով): Յեթե ծխախոտին նախոր-
դում են թթենոնածաղկիկ բռւյսեր (առվույտ, վիկ, կորնգան), ապա
այդ զեպքում, նրանցից անմիջապես յեկող ծխախոտն ազոտով
չպետք և պարաբացնել, բայց ֆոսֆորական նյութերով կարելի
յե պարաբացնել, մանավանդ յեթե առվույտը, կորնգանը կամ
վիկը նախորդ տարում ֆոսֆորական պարաբանյութ չեն ստա-
ցել: Այս վերջին մշակույթներին պետք ե միայն ֆոսֆորական
պարաբանյութ տար:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ 3

Ա.

ԾԽԱԽՈՏԻ ԲՈՒՅՍԻ ՍՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ԾԽԱԽՈՏԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ	7
Նիկոտին	8
Սպիտակուցային նյութեր	8
Սալպետեր	9
Անազոտ նյութեր	10
Անազոտ եկամուրակտային նյութեր	10
Որգանական թթուներ	11
Եթերային յուղեր	11
Մոխրանյութեր	11

Բ.

ԾԽԱԽՈՏԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Պարաբանյութերի գործածման պայմանները	13
Ծխախոտի մշակույթի համար անհրաժեշտ հո- ղային պայմանները	13
Որգանական պարաբանյութեր, գոմաղբ	15
ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ	17
Ազոտական պարաբացման պայմանները	17
Ֆոսֆորական պարաբանյութեր	18
Կալիումի պարաբանյութեր	19

20



NL0937615

1934г. - 210

ԳԻՐ 40 ԿՈՊ.

11

27931



Г. ДАВТЯН

Удобрение культуры табака

СЕЛЬХОЗГИЗ

1934

ЭРИВАНЬ